ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք. Աշտարակ 2025թ. օգոստոսի 25-ին, N 305-Ա

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՐԱԳԱԾԻ Դ. ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ. 1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՎԱՀԵ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 60-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 160-րդ հոդվածով, 162-րդ հոդվածի 1-ին մասով, 164-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Վ. Մկրտչյանի 2025 թվականի օգոստոսի 20-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Արագածի Դ. Դեմիրճյանի անվան հ.1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Վահե Մկրտչյանին տրամադրել ամենամյա արձակուրդ 2024-2025 թվականների ուսումնական տարվա համար 25 աշխատանքային օր տևողությամբ 2025 թվականի օգոստոսի 25-ից սեպտեմբերի 26-ը ներառյալ:

2. Վահե Մկրտչյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Արագածի Դ. Դեմիրճյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել «Արագածի Դ. Դեմիրճյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անուշ Բեյբությանի վրա:

3. Վահե Մկրտչյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի սեպտեմբերի 29-ից:

8/26/2025

X

VERIFIED OCSP 8/26/2025 18:00:05 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ